են Պալխարին որը չորս վերստ ցած իջնելով՝ միանում է Ճորոխին։

Պալխար վտակը աջ կողմից ընդունում է, բացի Մերեխեւի առ-ից Բալխար-Մացրա, Եայլա, Շալօվար, Վանից-Գեղ, Կիս-Պարօդ, Վժանգետ առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերն ու եայլաները։

Ինչպէս Պալխար վտակը 40 կիլոմետր տարածութիւն եւ ընդարձակ աւազան ունի, նոյնպէս Կորակ եւ Արջեւան առ-ը լայնարձակ աւազաններ ունին, որոնք՝ բացի վերոյիշեալ գեղերից, նոյնպէս ոռոգում են Բալհիբար, Մախաքիտ, Լանէք գեղերը եւ սրանց եայլաները։ Պալխարի կամ Բահլի աւազանը ընդհանրապէս 30 կիլոմետր երկարութիւն եւ 25 կիլոմետր լայնութիւն ունի, ինչպէս վտակը նոյնպէս լեռնաշղթան աշխարհահռչակ է։ Բացի ներկայիս գոյութիւն ունեցող աւաններից, գեղերից, եայլաներից մնացել են բլուրներ եւ թումբեր որոնց մօտի գերեզմանոցները, թոլմէններն ու կուրգանները, բարձունքների կատարին որմերի մնացորդները ցոյց են տալիս, թէ որքան չէն եւ բազմամարդ է եղել այս գաւառը։

Այս գաւառը «Փահլեւանների», Պահլաւների կամ Բահլաւների որորանն է։ Փաստերն ստիպում են ո՛չ միայն ենթադրելու, այլ եւ համոզուելու, որ այս գաւառն է Պահլաւների բունը՝ բնակավայրը։ Բահլի կամ Բալհի աւանը համանուն առուակի ափերին,